

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Պարույր Սևակի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի(19 դասաժամ),անգլերենի (9) ,ՆԶՊ (կես դրույք),ֆիզիկայի(2),կենսաբանություն/2/, ֆիզկուլտուրա (11), երաժշտություն (4.5),հայոց լեզու և գրականության(13),հայոց եկեղեցու պատմության(2) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Արցույթի մասնակցիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկաց-

վելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցա-
շարերի:

Արցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1),

2.Փաստաթուղթ(դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի
պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն(Ձև4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային
ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի,հավաս-
տագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

ՆԶՊ-ի ուսուցչի մրցույթին մասնակցողը պարտադիր պիտի ունենա պահեստազորի սպայի կոչում
և տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի
29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի
ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Արցույթը տեղի կունենա նոյեմբերի 1-ին՝ ժամը 12:00-ին, Արարատի մարզի գյուղ Տիգրանաշենի
հիմնական դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ 077 87-00-93 հեռախոսահամարով: